

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվությունը շարունակում է ցուցաբերել բարձր աճի տեմպ, ինչը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա բարձր բազայի ազդեցության աստիճանաբար չեզոքացմամբ և արդյունաբերության ոլորտի աստիճանական վերականգնմամբ: Այնուամենայնիվ, օգոստոսի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) հուլիսի համեմատ նվազել է՝ կազմելով 7.5%, դանդաղելով 1.5 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ հունվար-օգոստոսի կուտակային ՏԱՑ-ը շարունակել է արագանալ՝ հասնելով 7.1%-ի՝ հունվար-հուլիսի 6.9%-ի դիմաց:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹



2025թ. հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ի աճին շարունակում է ամենամեծ նպաստումն ունենալ ծառայությունների աճը՝ շուրջ 2.4 տոկոսային կետով: Առևտրի և շինարարության ոլորտները նույնպես դրական նպաստում են ունեցել ՏԱՑ-ին՝ համապատասխանաբար 1.7 և 1.0 տոկոսային կետով:


¹ ՏԱՑ-ի նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-օգոստոսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտը սկսել է ցուցաբերել դրական զարգացումներ: 2025թ. օգոստոսին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 5.8% աճ՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.6 տոկոսային կետով, որի հաշվին հունվար-օգոստոս ամիսների կուտակային անկումը մեղմվել է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ շուրջ 2.0 տոկոսային կետով՝ կազմելով 7.8%:

Արդյունաբերության անկումը 2025թ. հունվար-հուլիս ամիսներին² հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 16.1% անկմամբ, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 11.4 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում նույնպես գրանցվել է անկում, որի չափը կազմել է 1.0% և ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստել է 0.2 տոկոսային կետով: Արդյունաբերությանը դրական նպաստում է ունեցել «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը՝ 1.7 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը շարունակել է լինել գրեթե զրոյական:


Մշակող արդյունաբերության անկումը հիմնականում պայմանավորված է «հիմնական մետաղների արտադրություն» և «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն» ենթաոլորտների (որոնց նախորդ տարվա մեծ ծավալները պայմանավորված էին ոսկու վերաարտահանմամբ) համապատասխանաբար 71.6% և 62.5% անկմամբ, որոնց ընդհանուր նպաստումն արդյունաբերության նվազմանը կազմել է 15.6, իսկ մշակող արդյունաբերության անկմանը՝ 22.1 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության մյուս ենթաոլորտների շարքում էական անկումներ են գրանցվել «խմիչքների արտադրություն», «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» և «հագուստի արտադրություն» ենթաոլորտների թողարկման ծավալներում՝ համապատասխանաբար 14.4%, 15.8% և 4.4%, որոնք մշակող արդյունաբերության անկումն արագացրել են 1.5, 1.4 և 0.1 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերությանը դրական նպաստում են ունեցել «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն», «սննդամթերքի արտադրություն», «մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում» և «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն» ենթաոլորտները, որոնց նպաստումները ընդհանուր կազմել են 7.7 տոկոսային կետ: Մյուս ենթաոլորտների նպաստումները նշանակալի չեն եղել:

² Արդյունաբերության օգոստոս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը որոշակի դանդաղել է, սակայն կուտակային աճը շարունակում է արագանալ: 2025թ. օգոստոսին շինարարության աճը կազմել է 21.1 %՝ հուլիսի համեմատ դանդաղելով շուրջ 5.0 տոկոսային կետով: Աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են կազմակերպությունների և բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության աճով: Հունվար-օգոստոս ամիսներին շինարարության աճը կազմել է 20.4%՝ 0.2 տոկոսային կետով արագանալով հունվար-հուլիս ամիսների ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %³




³ Ծառայությունների նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Ծառայությունների ոլորտի աճի տեմպը կտրուկ դանդաղել է: Ծառայությունների ոլորտում 2025թ. օգոստոսին գրանցվել է 6.7% աճ՝ հուլիսի համեմատ դանդաղելով 4.7 տոկոսային կետով: Հունվար-օգոստոս ամիսների աճը կազմել է 10.2%՝ հունվար-հուլիսի համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը, հունվար-հուլիս⁴ ամիսների տվյալներով, հիմնականում պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», ինչպես նաև «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտների՝ համապատասխանաբար 16.2% և 19.1% աճերով, որոնց նպաստումները կազմել են 5.0 և 3.3 տոկոսային կետ: Աճին դրական նպաստում են ունեցել նաև մյուս ենթաօլորտները, բացի տրանսպորտային ծառայություններից, որտեղ շարունակել է գրանցվել շուրջ 2.8% անկում՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 0.3 տոկոսային կետով:

1.4. Առևտուր⁵

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպն աստիճանաբար դանդաղում է: Առևտրի ոլորտում 2025թ. օգոստոսին գրանցվել է ընդամենը 1.7% աճ՝ հուլիսի համեմատ դանդաղելով 1.3 տոկոսային կետով: Կուտակային աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ հասնելով 3.9%-ի՝ հունվար-հուլիսի 4.2%-ի համեմատ:

⁴ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

⁵ Առևտրի ոլորտի նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁶

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման անկման տեմպը կտրուկ մեծացել է: Վերջին ամիսներին արտահանման աճի ցուցանիշները աստիճանաբար բարելավման միտում ունեին, սակայն օգոստոսին արտահանման անկումը կտրուկ խորացել է՝ հասնելով 40.8%-ի նախորդ ամսվա 15.3%-ի դիմաց: Կուտակային ցուցանիշը շարունակել է բարելավել, սակայն ավելի քիչ չափով՝ 1.0 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի բարելավումը կազմել էր 3.5 տոկոսային կետ: **Արդյունքում՝ արտահանման խոր անկման տեմպերը պահպանվում են:**

Արտահանման անկումը, ըստ հունվար-հուլիս ամիսների ցուցանիշների⁷, ինչպես և ընթացիկ տարվա նախորդ ամիսներին, առավելապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (դա հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 75.7% նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 52.1 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման անկմանը էական բացասական նպաստում են ունեցել նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «մանածագործական իրեր» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր բացասական նպաստումը կազմել է շուրջ 1.2 տոկոսային կետ:


⁶ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁷ Արտահանման օգոստոս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Արտահանմանը դրական նպաստում ունեցած ապրանքախմբերից նշանակալի է եղել «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման 30.6% աճը, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 1.7 տոկոսային կետ: 0.5-ական տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել նաև «բուսական ծագման արտադրանք» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճերը: Մնացած ապրանքախմբերի նպաստումներն արտահանման աճին բավական փոքր են եղել:

Եթե արտահանման աճը ճշգրտենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստման չափով (չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը), ապա աճը կկազմի ընդամենը 2.5%: Այսինքն՝ առանց բազայի էֆեկտի, արտահանման աճն այդչափ ցածր է: Այս պատկերը բնութագրում է վերջին տարիներին արտահանման պոտենցիալի կորստի փաստը:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման անկման տեմպը նույնպես կտրուկ խորացել է: 2025թ. օգոստոսին ներմուծումը նվազել է 28.3%-ով՝ նախորդ ամսվա համեմատ վատթարանալով 13.0 տոկոսային կետով: Հունվար-օգոստոս ամիսների ներմուծման կուտակային նվազումը կազմել է 34.9%:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-հուլիս ամիսների ցուցանիշների⁸, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 77.5% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 40.1 տոկոսային կետ:

⁸ Ներմուծման օգոստոս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Ներմուծման աճին դրական նպաստում ունեցող ապրանքախմբերից առավել նշանակալի են եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի դրական նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 1.3 և 0.7 տոկոսային կետ:

Եթե հաշվի չառնենք ոսկու վերաարտահանման ծավալների փոփոխության ազդեցությունները, ապա ներմուծման աճը կլինի դրական, սակայն բավականին ցածր՝ 4.3%-ի չափ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁹

Անվանական աշխատավարձն աճում է կայուն տեմպով: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.7%-ով (նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով)՝ կազմելով 296,070 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.6%-ով (հունվար-հունիսի աճը՝ 5.5%)՝ կազմելով 322,758 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է ավելի ցածր տեմպով՝ 5.1%-ով (նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով)՝ կազմելով 227,315 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-հուլիսին, %



⁹ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2025թ. օգոստոսին ՀՀ դրամի անվանական փոխարժեքը շարունակել է բավական կայուն մնալ նախորդ ամսվա համեմատ: Օգոստոսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 383 դրամ՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով ընդամենը 1 դրամով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը նույնպես էական տատանում չի ունեցել՝ կազմելով 4.8 դրամ՝ նախորդ

ամսվա 4.9 դրամի փոխարեն: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը օգոստոսին որոշակիորեն արժևորվել է՝ կազմելով միջինում 446 դրամ՝ հուլիսի 449-ի համեմատ:


Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը հունվար-օգոստոս ամիսներին արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 1.2%-ով, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է համապատասխանաբար շուրջ 1.2%-ով և 4.9%-ով:

5. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը դանդաղել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը օգոստոսին կազմել է 10.9%՝ հուլիսի համեմատ դանդաղելով 7.1 տոկոսային կետով, իսկ հունվար-օգոստոս ամիսների աճը կազմել է 15.1%՝ դանդաղելով 0.5 տոկոսային կետով: Բյուջեի այլ եկամուտները (ոչ հարկային) հունվար-օգոստոսին աճել են 37.5%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները շարունակել են անկում գրանցել, որի չափը կազմել է 35.4%:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %




Հարկային եկամուտների աճը հունվար-օգոստոսին դանդաղել է՝ կազմելով 14.3%՝ հունվար-հուլիսի 14.7%-ի համեմատ: Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 23.9%), շահութահարկը (աճը՝ 19.2%) և եկամտային հարկը (աճը՝ 10.0%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 7.1, 3.2 և 2.8 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. հունվար-օգոստոս		2025թ. հունվար-օգոստոս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	6.0	6.0	14.3	14.3
Ավելացված արժեքի հարկ	-3.2	-1.0	23.9	7.1
Ակցիզային հարկ	-2.7	-0.2	15.5	0.8
Շահութահարկ	4.0	0.7	19.2	3.2
Պետական տուրք	20.7	0.6	16.8	0.5
Մաքսատուրք	0.5	0.0	0.2	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	98.6	1.9	-38.6	-1.4
Այլ հարկեր	10.3	0.3	-2.6	-0.1
Շրջանառության հարկ	16.7	0.4	27.8	0.8
Եկամտային հարկ	9.9	2.7	10.0	2.8
Սոցիալական վճարումներ	15.3	0.6	13.3	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը դանդաղել է: Ընդհանուր ծախսերը 2025թ. օգոստոսին նվազել են 3.0%-ով՝ հիմնականում պայմանավորված

կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) 24.3% նվազմամբ: Այնուամենայնիվ, հունվար-օգոստոս ամիսների ընդհանուր կապիտալ ծախսերն աճել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 39.3%-ով (հունվար-հուլիսի աճը՝ 51.9%):

Հունվար-օգոստոս ամիսներին ընդհանուր ծախսերի աճը կազմել է 12.9% (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 2.3 տոկոսային կետով), որին ընթացիկ ծախսերի աճի նպաստումը կազմել է 6.6, իսկ կապիտալ ծախսերինը՝ 5.9 տոկոսային կետ (ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 0.5 տոկոսային կետով):

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ




Եկամուտների և ծախսերի անվանական մակարդակները օգոստոսին գրեթե նույնն են եղել, ինչի արդյունքում պետական բյուջեի պակասուրդը մնացել է նույն մակարդակում: 2025թ. հունվար-օգոստոս ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 60.7 մլրդ դրամի չափով պակասուրդ՝ շուրջ 28.3%-ով (կամ 23.9 մլրդ դրամով) փոքր լինելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

5.4. Պետական պարտք

2025թ. օգոստոսի վերջի դրությամբ պարտքի աճի տեմպը դանդաղել է: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել է 13.4%-ով (նախորդ ամսվա աճը՝ 14.3%)՝ կազմելով շուրջ 14.1 մլրդ ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 13.9%-ով (նախորդ ամսվա աճը՝ 14.8%)՝ կազմելով 13.6 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 16.0%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 10.1%-ով:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները որոշակիորեն աճել են նախորդ ամսվա համեմատ: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. օգոստոսին կազմել է 8.1%՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 0.8 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը օգոստոսին կազմել է 9.68%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 0.2 տոկոսային կետով (հուլիսին միջնաժամկետ պարտատոմսեր չեն տեղաբաշխվել): 2025թ. օգոստոս ամսին երկարաժամկետ պարտատոմսեր չեն տեղաբաշխվել:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը պահպանվում է ցածր և կայուն մակարդակում: 2025թ. հուլիսին 12-ամսյա գնաճի տեմպը կազմել է 3.6%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.2 տոկոսային կետով: Այն գտնվում է կենտրոնական բանկի համար սահմանված նոր՝ $3\pm 1\%$ թիրախային միջակայքում: Այս պայմաններում, ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը պահպանում է անփոփոխ մակարդակում:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը տատանողական է վերջին ամիսներին, սակայն ընդհանուր առմամբ պահպանվում է բարձր մակարդակում: Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 15.8%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.9 տոկոսային կետով: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 15.8% և 15.6%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2025թ. օգոստոսին ավանդների աճին ամենամեծ նպաստումն է ունեցել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է 7.2 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը պահպանվում է բարձր մակարդակում, սակայն ունի նվազման միտում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 26.6%-ով՝ պայմանավորված ռեզիդենտներին տրամադրված վարկերի 27.9% աճով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալը նվազել է 3.6%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում իրավաբանական անձանց վարկերն աճել են 29.2%-ով, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ 26.6%-ով, դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար 14.7 և 13.2 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ¹⁰




2025թ. օգոստոսին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերն աճել են՝ դրականորեն նպաստելով վարկերի ընդհանուր ծավալի աճին: Առավել նշանակալի են եղել սպառողական (աճը՝ 31.1%) և հիպոթեքային (աճը՝ 26.3%) վարկերի աճերը: Վերջիններս ընդհանուր վարկերի աճին նպաստել են համապատասխանաբար 6.9 և 5.8 տոկոսային կետով:

¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների գուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) որոշակիորեն աճել է նախորդ ամսվա համեմատ, սակայն դեռևս գտնվում է ցածր մակարդակում: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. հուլիսին կազմել է 129.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 53.1 մլն դոլարով: Արդյունքում, հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ դրամական միջոցների զուտ ներհոսքը նվազել է 5.5%-ով՝ կազմելով 716.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների 758.7 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճը վերջին ամիսներին պահպանվում է բարձր մակարդակում: Օգոստոսին ՏԱՑ-ը կազմել է 7.5%, իսկ հունվար-օգոստոս ամիսների կուտակային ցուցանիշը կազմել է 7.1%: Բարձր աճերի պահպանումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա բարձր բազայի աստիճանաբար չեզոքացմամբ, որի արդյունքում նկատվում է արդյունաբերության ոլորտի որոշակի վերականգնում: Բացի այդ, բարձր աճի տեմպեր են գրանցվում նաև շինարարության ոլորտում՝ ինչը ևս դրականորեն է նպաստում բարձր աճերի ձևավորմանը: Այնուամենայնիվ, խոսքը ՏԱՑ-ի բարձր լինելու մասին է, մինչդեռ ՀՆԱ-ի իրական աճը, որը տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշն է,

11 Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2025թ. հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

համաձայն հունվար-հունիս ամիսների տվյալների՝ շուրջ 1 տոկոսային կետով ավելի ցածր է:

2. Արտահանման ոլորտում պատկերը մնում է մտահոգիչ: Արտահանման անկման տեմպը մի քանի ամիս շարունակ մեղմվելուց հետո, օգոստոսին կրկին վատթարացել է՝ հասնելով 40.8%-ի: Հունվար-օգոստոս ամիսների արտահանման անկումը կազմել է 48.8%: Անկման այս մեծ չափերը հիմնականում պայմանավորված են վերաարտահանման ծավալների նվազմամբ, և դրա մեծ մասը ճշգրտելու դեպքում արտահանման աճը կազմում է ընդամենը 2.5% (ըստ հունվար-հուլիս ամիսների տվյալների), ինչը ցույց է տալիս, որ արտահանման պոտենցիալն էականորեն նվազել է:

3. Տնային տնտեսություններին տրվող վարկերի աճի տեմպը շարունակում է էականորեն գերազանցել նրանց եկամուտների աճին: Վարկերի ընդհանուր ծավալի աճը առավելապես պայմանավորված է սպառողական և հիպոթեքային վարկերի աճերով՝ համապատասխանաբար 31.1% և 26.3%: Հատկանշական է, որ բնակչության եկամուտները (աշխատավարձերը, դրամական փոխանցումները, իրական ՀՆԱ-ն և այլն) չեն աճում համապատասխան չափով: Այս առումով եկամուտների համեմատ վարկերի զգալի տարբերությամբ առաջանցիկ աճը ֆինանսական կայունության տեսանկյունից միջնաժամկետում կարող է ռիսկեր առաջացնել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: